


Ամփոփում

- **Ընթացիկ իրավիճակի հակիրճ գնահատումը:**
Հայաստանը վերջին 5-6 տարում իրականացնում է պաշտպանական ոլորտի բարեփոխումներ: Այդ նպատակով ստեղծված է համապատասխան հանձնաժողով՝ պաշտպանության նախարարի գլխավորությամբ, կազմված երկու ենթահանձնաժողովից /ԳՇՊ-ի և փոխնախարար գ/լ-տ Ա.Աղաբեկյանի գլխավորությամբ/:
- **Պաշտպանական բարեփոխումների հիմնական նպատակը:**
Ստեղծել արդիական պաշտպանական համակարգ, որն առավել վերահսկելի կլինի քաղաքացիական հասարակության կողմից և միաամանակ առավել արդյունավետ կերպով կապահովի պետության անվտանգությունը:
- **Վերափոխված ՊՆ-ի առաջնային առաքելությունը և հիմնական գործառույթները:**
Իրավիճակի վերլուծություն և սպառնալիքների գնահատումը, կառուցվածքային փոփոխությունների հեռանկարային պլանավորումը, ռազմաքաղաքական և ռազմական պլանների մշակումը, ԶՈւ-ի ղեկավարումը, նրանց մարտական և թիկունքային ապահովումը:
- **Կազմակերպության հայեցակարգ /կոնցեպցիա/:**
Տե՛ս սխեման /հաջորդ սլայդը/
- **Ազգային զինվորական հրամանատարական շղթայում կատարված բարելավումները:**
2005թ. ՀՀ ՊՆ-ում վերացվել է փոխնախարարի մեկ պաշտոն՝ իր աշխատակազմով: 2006թ. Նոյեմբեր-դեկտեմբերին լուծարվել է երկու վարչություն, որոնց հիման վրա կազմավորվել է կադրերի և ռազմական կրթության վարչությունը, որի կազմում ընդգրկվել է նաև ԱՀ և ՌՀ Վ-ի կազմից դուրս բերված Օտար լեզուների ուսուցման կենտրոնը:

ՀՀ ՊՆ ԵՎ ԶՈՒ ԳՇ ԳՈՐԾՈՂ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Ամփոփում.

- **Քաղաքական, վարչական և շտաբային աշխատանքի բաժանումը և հիմնական ֆունկցիաները:**
- Քաղաքական ֆունկցիաները իրականացնելու են ՊՆ-ին ենթակա ստորաբաժանումները, որոնք հիմնականում համալրված են լինելու քաղաքացիական անձանցով,
- Վարչական ֆունկցիաներն իրականացնելու են իրավաբանական, ֆինանսական, գործավարության, ինչպես նաև հասարակության հետ կապերի ծառայությունները /վարչությունները/
- Շտաբային ֆունկցիաներն իրականացնելու են ԳՇՊ-ին ենթակա ստորաբաժանումները
- **Քաղաքացիականացման ռազմավարությունը /նպատակներ և մոտեցումներ/ և ակնկալվող արդյունքները:**
- Քաղաքական ուղղորդում և ժողովրդավարական վերահսկողություն
- Քաղաքացիական անձանց փորձի և մենթալիտետի կիրառումը պաշտպանական պլանավորման մեջ
- Ֆինանսական և նոյթական այլ միջոցների հնարավորինս առավելագույն խնայողություն

Ամփոփում.

- **Նոր անձնակազմի կառավարման համակարգի գաղափարախոսությունը և սկզբունքները:**
ՀՀ Պաշտպանության մասին նոր /փոփախված/ օրենքի համաձայն՝ ՀՀ ՁՈւ Նոր կանոնադրությունների ստեղծում
- կառավարման արդյունավետության բարձրացում, հրամանատարական շղայի կատարելագործում, պատասխանատվության բարձրացում, մշտական ինքնակատարելագրման ձգտում
- **Վերափոխման ժամկետները և օրակարգը /ընթացակարգ/:**
2008թ. /համաձայն ԱԳԳԾ-ի/ ՀՀ-ն պետք է իր անձնակազմի կառավարման համակարգը համապատասխանեցնել ՆԱՏՕ-ի չափորոշիչներին
- **Ինչպես այս բարեփոխումները կարտացոլվեն <<Պաշտպանության մասին>> օրենքում (փոփոխություններ, նոր բաժիններ կամ նոր օրենքի ընդունում):**
Պաշտպանության մասին օրենքի համապատասխանեցում ներկայիս իրավիճակին և ՁՈւ ապագա զարգացման պահանջներին

- Ինչպիսի առաքելություն պետք է իրականացնի վերափոխված ՊՆ-ը ներպետական և միջազգային բնագավառներում:

Այն պետք է իրականացնի ռազմաքաղաքական և պաշտպանական պլանների մշակում, իրավիճակի վերլուծության և սպառնալիքների գնահատում, կառուցվածքային հեռանկարային պլանավորում, անձնակազմի կառավարման քաղաքականության մշակում և զինված ուժերի ղեկավարման ու նյութատեխնիկական ապահովում:

- Ինչպիսի նորամուծություն է ակնկալվում վերափոխված ՊՆ համակարգում:

Գործող սուբորդինացիայի վերանայում:

Ինչպիսի հարաբերություններ են հաստատվելու ԳՇ-ի և նրա ղեկավարի (պետի) հետ:

Այն հաշվետու է միայն Պաշտպանության Նախարարին, իսկ վերջինս զորքերի ղեկավարումն իրականացնելու է միայն ԳՇ միջոցով:

- Ինչպես կարելի է կատարելագործել ՊՆ արդյունավետությունը:

Առկա կադրային և ֆինանսա-տնտեսական ռեսուրսների ճիշտ օգտագործմամբ, ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունների միջոցով հասնել արդյունավետության կատարելագործման:

1.1

- Ով պետք է ղեկավարի ՊՆ վերափոխման գործընթացը և ինչպիսի դերակատարություն կարող են ունենալ այդ հարցում իշխանության մյուս թևերը:

Պաշտպանության Նախարարի 1-ին *քաղաքացիական* տեղակալը: Իսկ ինչ վերաբերվում է իշխանության մյուս թևերին, ապա անշուշտ մեծ դեր է վերապահված և՛ գործադիր և՛, հատկապես, օրենսդիր իշխանությանը:

- Ինչպիսի միջազգային օժանդակության անհրաժեշտություն կառաջանա:

Մենք փորձելու ենք ուսումնասիրել բոլոր պետությունների, հատկապես ՆԱՏՕ-ի անդամ երկրների վերափոխման փորձը, ինչպես նաև ակնկալել բարեկամ պետությունների օժանդակությունը:

- Ինչպես եք պատկերացնում վերափոխման գործընթացը:

Այն ենթադրում է պաշտպանությանը վերաբերող օրենսդրական դաշտի բարեփոխում և կատարելագործում, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի վերանայում և վավերացում:

2

- Ինչ հիմնական արդյունք կարելի է ակնկալել պաշտպանական համակարգի քաղաքացիականացումից. (պաշտպանական ինստիտուտների արդյունավետության և հասարակության համար):
Համապատասխան կրթությամբ և մասնագիտական ունակություններով օժտված մարդկանց ներգրավում, քաղաքացիական վերահսկողության ուժեղացում և պաշտպանական համակարգի նկատմամբ հասարակության վստահության ներշնչում:
- Որտեղ պետք է լինի ավելի շատ կամ քիչ քաղաքացիական անձնակազմ:
Քաղաքացիական անձնակազմը պետք է գերակշռի ՊՆ կառուցվածքային ստորաբաժանումներում, մինչդեռ ռազմական անձնակազմը՝ ԳՇ-ում:
- Ինչպես եք պատկերացնում քաղաքացիական անձնակազմի ընտրությունը (սելեկցիան) և ինչպիսի որակական չափանիշներ են նախատեսված վերջիններիս համար:
Քաղաքացիական անձնակազմի ընտրությունը նախատեսվում է իրականացնել հատուկ հանձնաժողովի /խորհրդի/ կողմից մրցույթային կարգով՝ հիմք ընդունելով պաշտոնի նկարագիրը, իսկ հավասար պայմանների դեպքում՝ առաջնայնությունը տրվում է զինծառայողի, ինչպես նաև գոհված ազատամարտիկների և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ մահացածների ընտանիքների անդամներին:

2.1

- Ինչ պետք անել քաղաքացիական- ռազմական համաձայնեցված թիմ ստեղծելու համար: Ընդամենը պետք է ցանկություն ունենալ: Պետք է ցանկացած խնդրի առաջադրում դիտարկել որպես տեխնոլոգիական գործընթացի շղթա և այդ շղթայի ցանկացած օղակ դիտարկել որպես կոնկրետ պաշտոն, իսկ շղթայի որոշ օղակներ կարող են լինել զուտ քաղաքացիական անձինք:
- Նախատեսվում է արդյոք պաշտպանության քաղաքացիական մասնագիտության ստեղծում:
Ոչ թե ստեղծում, այլ սկզբից անհրաժեշտ է առանձնացնել այն պաշտոնների ցանկը իրենց նկարագիրներով, որոնք պետք է զբաղեցնեն քաղաքացիականները:
- Ինչ ճանապարհով կարելի է ապահովել հավասար վարձատրություն զինվորական և քաղաքացիական անձնակազմերի համար միևնույն աշխատանքի դեպքում:
Հիմնականում համապատասխան օրենքների ընդունմամբ կամ առանձին հոդվածների փոփոխմամբ:
- Արդյոք քաղաքացիական անձնակազմը պետք է ունենա նույնպիսի արտոնություններ, ինչ զինվորականները: Ինչ համեմատություն կարելի է անել վերջիններիս և պետական այլ գերատեսչություններում գործող վարձատրության կարգի վերաբերյալ:
- Եթե նրանց գործունեությունը կապված է հատուկ կլիմայական և այլ ծանր պայմաններում մարտական խնդիրների իրականացման հետ, ապա այո:
- Ինչ վերաբերվում է վարձատրությանը, ապա այն, անշուշտ, պետք է լինի բարձր:

- **Որոնք պետք է լինեն նոր անձնակազմի կառավարման համակարգի ուղենիշները:**

ԶՈւ կադրային պահանջարկի վերլուծություն ըստ կրթական, մասնագիտական, տարիքային ցենզերի և կադրային ռեսուրսների ճիշտ պլանավորմամբ:

- **Որոնք պետք է լինեն անձնակազմի կառավարման համակարգի նոր առանձնահատկությունները:**

1. կադրային քաղաքականության մշակում
2. կադրերի ճիշտ ընտրություն, նրանց կրթում, բաշխում, վերապատրաստում և վերաբաշխում
3. համալրվածությունը բարձրակարգ-արհեստավարժ անձնակազմով
4. համապատասխան տխնիկական համալրվածություն
5. ավանդական ռազմական արժեքների պահպանում

- **Ինչպես կարելի է հասնել համակարգի թափանցիկության, ապաքաղաքականացման և անկողմնակալության:**

նախ պետք է ունենալ կամքի մեծ ուժ: Բարոյական բարձր հատկանիշներով օժտված կադրերի ներգրավում, ժողովրդական վերահսկողության սահմանում:

- **Ինչպես կարելի է հաստատել հավասարություն:**

Ինչպիսի հասարակություն, այնպիսի բանակ:

- **Ինչպես կարելի է ծառայությունը ՊՆ-ում դարձնել ավելի գրավիչ:**

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելով, նախատեսելով սոցիալ-տնտեսական, առողջապահական և այլ արտոնություններ այդ թվում ստեղծելով ծառայության համար անհրաժեշտ կենցաղային պայմաններ և ապահովելով համեմատական հավասարություն:

3.1

- **Ինչպես կարելի է գնահատել ծառայողներին: Առաջխաղացման ինչպիսի հիմնական չափանիշներ պետք է սահմանվեն:**
Վերջին պաշտոնում գտնվելու ժամանակահատվածը, դրական բնութագիրը, համապատասխան կրթության և մասնագիտական ունակությունները:
- **Ինչպիսի միջոցներ կարելի է կիրառել ոչ հեռանկարային սպաների նկատմամբ:**
Հավասարազոր պաշտոնի առաջարկում, իսկ չարդարացնելու դեպքում՝ պայմանագրի լուծում:
- **Ինչ պետք է իր մեջ ներառի ՊՆ սոցիալական փաթեթը:**
Անվճար բժշկական սպասարկում, առողջարանային բուժում, բնակարանային ապահովում, տրանսպորտային միջոցներից անվճար օգտվում, արտոնյալ կենսաթոշակի սահմանում և այլն: